

դ. Կողմերի իրավունքների և պարտականությունների վերջնական և պարտադիր որոշում

Կողմերի որոշմանը համաձայն՝ արբիտրները պետք է վերջնականապես լուծեն վեճը: Կողմերն ընդունում են ոչ միայն այն, որ արբիտրաժը պետք է լինի վեճի լուծման ձև, այլ նաև այն, որ նրանք կընդունեն և կկիրառեն արբիտրաժային համաձայնությունը:

Արբիտրաժային համաձայնությունն ենթադրում է, որ ընթացակարգային խիստ կանոնները և պետական բողոքարկումները կիրառելի չեն, բացառությամբ սահմանափակ, բայց էական պաշտպանողական դրույթների: Արբիտրների վճիռը վերջնական և պարտադիր է կողմերի համար:

Արբիտրաժի միջոցով լուծման հնարավոր վեճեր

Արբիտրաժի միջոցով կարող են լուծվել միայն առևտրային վեճեր, որոնք ներառում են ինչպես պայմանագրային, այնպես էլ ոչ պայմանագրային առևտրային բնույթի բոլոր իրավահարաբերությունները, ներառյալ՝ բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված, ապրանքների ու ծառայությունների մատակարարման և փոխանակման, առևտրային ներկայացուցչության կամ գործակալման, ֆակտորինգի, վարձակալության, աշխատանքների կատարման, խորհրդատվության, նախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, ապահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձևերի, ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների:

ԱՐԲԻՏՐԱՅԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համարվում է, որ պետական դատարանները ունեն ներհատուկ ազգային բնույթ: Դատավորները հանդիսանում են կոնկրետ պետության քաղաքացիներ: Նրանք չունեն համապատասխան ունակություններ կամ գիտելիք՝ լուծելու միջազգային գործարքներից բխող վեճեր, կամ վեճեր տարբեր երկրներից, այսինքն՝ հակասող իրավական, մշակութային, քաղաքական և էթիկական համակարգերից եկող կողմերի միջև: Պետական դատարանների ընթացակարգը համապատասխանում է այդ պետության օրենքներին: Պետական դատարանները հիմնականում բաց են հասարակության համար:

Պետական դատարանը արբիտրաժային տրիբունալից տարբերակող հիմնական գործոնը դա պետական դատարանների ընթացակարգերի խստությունն է: Բոլոր դատարաններն օժտված են քաղաքացիական դատավարության օրենսգրքերով կամ նախադեպերով, որոնք կարգավորում են, թե ինչպես ընթացակարգը պետք է իրականացվի: Գոյություն ունեն քիչ հարցեր, որոնց կապակցությամբ դատավորը կարող է իր հայեցողությամբ, նույնիսկ կողմերի համաձայնությամբ, շեղվել քաղաքացական դատավարության օրենսգրքից կամ կանոններից:

Ի հակադրումն սրա, յուրաքանչյուր արբիտրաժի ձևը, կառուցվածքը և ընթացակարգը տարբեր է մյուս արբիտրաժներից և փոփոխական է գործի հանգամանքերի տարբեր լինելու դեպքում: Արբիտրաժները կարող են իրականացվել տարբեր կանոններով, տարբեր ազգային և միջազգային նորմերի կիրառմամբ, մեկ կամ երեք արբիտրների կազմով և մեկ կամ ավելի հայցվորներով և պատասխանողներով:

Ճկուն ընթացակարգ. Չի կարող գոյություն ունենալ ոչ ճկուն արբիտրաժ այն դեպքում, երբ կողմերը գալիս են տարբեր երկրներից, արբիտրաժն իրականացվում է տարբեր իրավական համակարգերի կամ արբիտրաժային կանոնների համապատասխանությամբ, տարբեր երկրներից եկող արբիտրներով: Յուրաքանչյուր արբիտրաժի համար անհրաժեշտ է յուրահատուկ ընթացակարգ: Կողմերը և արբիտրները կարող են ընտրել ընթացակարգ՝ գործի հանգամանքների առանձնահատկություններից համապատասխանելու համար՝ հաշվի առնելով արբիտրաժի մասնավոր բնույթը և այն, որ արբիտրաժը ձևավավորվում է կողմերի համաձայնությամբ:

Համապատասխանությունը միջազգային գործարքներին. մի պետության քաղաքացիները հաճախ չեն ցանկանում հանձնել վեճը մյուս կողմի դատարաններին: Անկախ նրանից արդարացված է այդ մոտեցումը, թե ոչ՝ հաճախ կողմերը չեն վստահում օտարերկրյա դատարաններին, ինչպես նաև նրանց համապատասխանությանը որոշ միջազգային պայմանագրերին վերաբերող վեճեր լուծելու համար: Չեզոք տարածքում գտնվող և որևէ ազգային իրավական համակարգին չպատկանող արբիտրաժային ընթացակարգի չեզոքությունը և անկախությունը գրավում է արբիտրաժի կողմերին՝ իրենց միջազգային վեճերը լուծելու համար: Արբիտրաժը տրամադրում է վեճերի լուծման մի մեխանիզմ, որտեղ պաշտպանված են տարբեր պետություններից և տարբեր իրավական, մշակութային, քաղաքական և էթիկական համակարգերից եկող կողմերի շահերը:

Վերջնական և պարտադիր. որպես կանոն արբիտրների որոշումները վերջնական են և պարտադիր: Արբիտրաժային վճիռների սխալ լինելու հիմքով բողոքարկման հնարավորությունները սահմանափակ են կամ ընդհանրապես բացակայում են: Նմանապես, արբիտրների որոշումների վիճարկման հիմքերը ընդգրկում են միայն այն դեպքերը, երբ արբիտրները գերազանցել են իրենց իրավասությունները կամ խախտել են որոշ կարևորագույն սկզբունքներ:

Պարզեցված կատարում. ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային արբիտրաժային վճիռները կարող են հեշտությամբ կատարվել: Շատ երկրներում ներպետական վճիռը կարող է կատարվել այնպես, ինչպես պետական դատարանի որոշումը: Գոյություն չունի արբիտրաժային դատարանների որոշումների և դրանց հիմքերի վերանայման հնարավորություն:

Միջազգային ոլորտում արբիտրաժային վճիռները ավելի հեշտ են կատարվում, քան պետական դատարանների որոշումները: Որպես Նյու Յորքի Կոնվենցիայի վավերացման հետևանք՝ այժմ գոյություն ունի 130-ից ավել պետություն, որոնք պարտավորվել են կատարել Նյու Յորքի Կոնվենցիան վավերացրած պետություններում ընդունված արբիտրաժային վճիռները: Կատարումը մերժելու հիմքերը սահմանափակ են: Այս համակարգն ավելի արդյունավետ է, քան դատական որոշումների կատարումը, որը կախված է երկկողմանի և բազմակողմ միջազգային պայմանագրերից:

Չեզոքություն. ի տարբերություն պետական դատարանների հնարավոր կողմնակալության՝ արբիտրաժային դատարանը համարվում է չեզոք: Դրա գտնվելու վայրը կարող է ընտրվել այն երկրում, որի հետ ոչ մի կողմ կապված չէ, արբիտրները կարող են նշանակվել տարբեր երկրներից և ազգություններից, և դրանով տրիբունալը կլինի ազգային ազդեցություններից անկախ: Այս չեզոքությունը օժտում է արբիտրաժն անկախությամբ և կողմերի հանդեպ հավատարմությամբ: Չեզոքությունը արբիտրաժին թույլ է տալիս նաև գործել պետական շահերից կտրված՝ խրախուսելով միջազգային բնույթի զարգացումները:

Փորձագիտական արբիտրաժներ. կողմերը կարող են ընտրել հատուկ, փորձագիտական գիտելիքներով օժտված արբիտրների՝ այն վեճերի համար, որոնք բխում են նեղ մասնագիտական ոլորտներից կամ այն դեպքում, երբ վեճը ներկայացնում է առանձնահատկություններ: Հատուկ գիտելիքներ ունենալը և վեճի յուրահատուկ բնույթը հասկանալը լրացուցիչ վստահություն կտրամադրի արբիտրաժային ընթացակարգի նկատմամբ, չնայած նրան, որ ընդհանուր առմամբ արբիտրներից չի պահանջվում օգտագործել իրենց նեղ գիտելիքները որոշում կայացնելու համար, քանի որ դա փորձագետի գործառույթն է:

Գաղտնիություն. հաշվի առնելով արբիտրաժի մասնավոր բնույթը՝ ընդունված է, որ արբիտրաժային ընթացակարգը գաղտնի է իր էությունը: Հետևապես, արբիտրաժային ընթացակարգը ոչ միայն կմնա գաղտնի կողմերի միջև, այլ նաև կլինի բացարձակապես գաղտնի: Դա նշանակում է, որ արբիտրաժի գոյությունը, առարկան, ապացույցները, պատրաստված և փոխանակված փաստաթղթերը և արբիտրաժային վճիռները չեն կարող բացահայտվել երրորդ անձանց: Դա նաև նշանակում է, որ միայն կողմերը, նրանց ներկայացուցիչները և այլ լիազորված անձինք կարող են մասնակցել լսումներին: Նշվածներից յուրաքանչյուրը պետք է պահպանի գաղտնիության պարտականությունը՝ հօգուտ իրենց կողմից ներկայացվող կողմի:

Արագությունը. հաճախ ենթադրվում է, որ արբիտրաժն արագ է կամ առնվազն պետք է ավելի արագ լինի, քան պետական դատարանները: Տեսության մեջ և շատ դեպքերում դա ճիշտ է: Կողմերի ինքնավարության շնորհիվ արբիտրները նշանակվում են կոնկրետ գործի համար, ինչի արդյունքում գոյություն չունի գործերի կուտակում: Շատ երկրներում պետական դատարանները շատ են ծանրաբեռնված գործերով, ինչի արդյունքում տարիներ կարող են տևել մինչև գործը լավի: Եթե կողմերի համաձայնությունը ձեռք է բերվել, արբիտրաժային տրիբունալը կարող է ձևավորվել շատ կարճ ժամկետում և իրենց փաստարկները կարճ ժամկետում ներկայացվելու դեպքում գործը քննվում է մեծ արագությամբ:

Ծախս. արբիտրաժը սկզբունքորեն պետք է լինի ավելի մատչելի, քան պետական դատարանները՝ ի շնորհիվ վերոնշյալ առավելությունների: Դա այսպես է տեսությունում, սակայն պրակտիկայում դա ոչ միշտ է ճիշտ: Այն դեպքում, երբ արբիտրաժն իրականացվում է արագ տեմպերով և վճիռները կայացվում են առանց ձգձգումների, ծախսերը ակնհայտորեն ցածր են, քան պետական ձգձգվող դատավարություններում: Սակայն բարդ արբիտրաժների ժամանակ, մասնավորապես երեք արբիտրներից կազմված արբիտրաժային տրիբունալի դեպքում, դա այդպես չէ, քանի որ կողմերը պետք է վճարեն իրավաբանների վարձը, ինչպես նաև արբիտրների բարձր հոնորարները:

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հասկացությունը

Արբիտրաժային համաձայնությունը պայմանագրային կամ ոչ պայմանագրային որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու վերաբերյալ: Արբիտրաժային համաձայնությունը կարող է կնքվել ինչպես պայմանագրում արբիտրաժային վերապահման, այնպես էլ առանձին պայմանագրի (արբիտրաժային համաձայնագրի) ձևով:

Արբիտրաժային համաձայնությունը բացառում է պետական դատարանների իրավասությունը: Այսպես, դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն, պարտավոր է կողմերից մեկի միջնորդության հիման վրա, որը բերվել է ոչ ուշ, քան վեճի էության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը, հայրը թողնել առանց քննության, բացառությամբ, եթե գտնում է, որ այդ համաձայնությունն առ ոչինչ է, ուժը կորցրել է կամ չի կարող կատարվել:

Առաջարկվող արբիտրաժային համաձայնություն

Հայաստանի Հանրապետության Առևտրաարդյունաբերական պալատին կից Արբիտրաժային Դատարանին վեճերը հանձնելու համար խորհուրդ է տրվում արբիտրաժային համաձայնությունը ձևակերպել հետևյալ կերպ. «Մույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր դատարանների ենթակայությունը, հանձնվում է Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատին (ՀՀ ԱԱՊ) կից մշտապես գործող արբիտրաժային դատարանին՝ համաձայն վերջինիս կանոնակարգի՝ երեք արբիտրների կազմով, դատավարության լեզուն», արբիտրաժի վայրը՝ քաղաք

Արբիտրաժային համաձայնության ձևը

Արբիտրաժային համաձայնությունը կնքվում է գրավոր: Համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված, եթե դա կատարվել է կողմերի ստորագրությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելով, կամ կնքված է նամակներով, հեռատիպով, հեռագրով, էլեկտրոնային կամ այդպիսի համաձայնության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու միջոցով կամ հայցի ու պատասխանի վերաբերյալ հաղորդումների փոխանակմամբ, որտեղ մի կողմը վկայակոչում է արբիտրաժային համաձայնության առկայությունը, իսկ մյուս կողմը չի առարկում դրա դեմ:

Պայմանագրում կատարված հղումը այնպիսի փաստաթղթին, որը պարունակում է արբիտրաժային վերապահում, համարվում է արբիտրաժային համաձայնություն այն պայմանով, որ պայմանագիրը կնքված է գրավոր ձևով, և տվյալ հղումը այնպիսին է, որ նշված վերապահումը դարձնում է պայմանագրի մաս: Արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված նաև, եթե արբիտրաժային համաձայնության մասին մի կողմի գրավոր առաջարկությունը որևէ ձևով ընդունել է մյուս կողմը:

Արբիտրաժային համաձայնության ինքնավարությունը

Արբիտրաժային վերապահումը, որը հանդիսանում է պայմանագրի բաղկացուցիչ մաս, պետք է մեկնաբանվի որպես պայմանագրի մյուս մասերից անկախ համաձայնություն: Պայմանագրի ուժը կորցրած լինելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշումը չի հանգեցնում արբիտրաժային վերապահման անվավերության:

Արբիտրաժային համաձայնության կողմերից մեկի մահը չի հանգեցնում արբիտրաժային համաձայնության դադարման, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, կամ վիճելի իրավահարաբերությունը չի բացառում իրավահաջորդությունը:

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼ

Արբիտրաժային տրիբունալի ձևավորումը

Արբիտրների թիվը որոշվում է կողմերի համաձայնությամբ և պետք է լինի կենտ: Արբիտրների թվի շուրջ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է երեք արբիտրի կազմով:

Կողմերն ազատ են արբիտրաժային համաձայնությամբ սահմանելու արբիտրին ներկայացվող ցանկացած պահանջ: Ոչ ոք չի կարող իր քաղաքացիության պատճառով զրկվել արբիտր նշանակվելու իրավունքից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Արբիտր կարող է լինել 18 տարին լրացած յուրաքանչյուր գործունակ ֆիզիկական անձ, եթե կողմերի համաձայնությամբ ավելի բարձր տարիք նախատեսված չէ:

Եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ.

1. երեք կամ ավելի արբիտրներով իրականացվող արբիտրաժի դեպքում յուրաքանչյուր կողմը նշանակում է հավասար թվով արբիտր, և այդ կերպ նշանակված արբիտրները ձայների մեծամասնությամբ նշանակում են վերջին արբիտրին, որը հանդես է գալիս որպես տրիբունալի նախագահող: Եթե մի կողմը արբիտր նշանակելու մասին մյուս կողմի պահանջը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, չի նշանակում արբիտր, կամ կողմերի նշանակած արբիտրներն իրենց նշանակման օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում, համաձայնություն ձեռք չեն բերում վերջին արբիտրի նշանակման շուրջ, ապա կողմի խնդրանքով նշանակումը կատարում է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը,

2. միանձնյա արբիտրի մասնակցությամբ արբիտրաժի դեպքում, եթե կողմերը չեն համաձայնվում արբիտրի նշանակման շուրջ, ապա կողմի խնդրանքով նշանակումը կատարում է այն կողմերի արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված նշանակողը, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը:

Եթե նշանակման ընթացակարգի վերաբերյալ համաձայնությունը չի նախատեսում նշանակումն ապահովող այլ միջոցներ, ապա կողմերից յուրաքանչյուրն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պահանջով կարող է դիմել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան այն դեպքերում, երբ կողմերի համաձայնեցրած ընթացակարգը կիրառելիս՝

1. կողմերից մեկը չի գործում դրա պահանջներին համապատասխան,
2. կողմերը կամ կողմերի նշանակած արբիտրները չեն կարողանում համաձայնության գալ սահմանված ընթացակարգի համաձայն,
3. սահմանված ընթացակարգի շրջանակներում երրորդ կողմը, ներառյալ՝ հաստատությունը, չի կատարում իրեն վերապահված որևէ գործառույթ:

Ընդ որում, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումները այս հարցերի կապակցությամբ ենթակա չեն բողոքարկման:

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼ

Արբիտրաժային տրիբունալի ձևավորումը

Արբիտրների թիվը որոշվում է կողմերի համաձայնությամբ և պետք է լինի կենտ: Արբիտրների թվի շուրջ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է երեք արբիտրի կազմով:

Կողմերն ազատ են արբիտրաժային համաձայնությամբ սահմանելու արբիտրին ներկայացվող ցանկացած պահանջ: Ոչ ոք չի կարող իր քաղաքացիության պատճառով զրկվել արբիտր նշանակվելու իրավունքից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Արբիտր կարող է լինել 18 տարին լրացած յուրաքանչյուր գործունակ ֆիզիկական անձ, եթե կողմերի համաձայնությամբ ավելի բարձր տարիք նախատեսված չէ:

Եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ.

երեք կամ ավելի արբիտրներով իրականացվող արբիտրաժի դեպքում յուրաքանչյուր կողմը նշանակում է հավասար թվով արբիտր, և այդ կերպ նշանակված արբիտրները ձայների մեծամասնությամբ նշանակում են վերջին արբիտրին, որը հանդես է գալիս որպես տրիբունալի նախագահող: Եթե մի կողմը արբիտր նշանակելու մասին մյուս կողմի պահանջը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, չի նշանակում արբիտր, կամ կողմերի նշանակած արբիտրներն իրենց նշանակման օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում, համաձայնություն ձեռք չեն բերում վերջին արբիտրի նշանակման շուրջ, ապա կողմի խնդրանքով նշանակումը կատարում է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը,

2. միանձնյա արբիտրի մասնակցությամբ արբիտրաժի դեպքում, եթե կողմերը չեն համաձայնվում արբիտրի նշանակման շուրջ, ապա կողմի խնդրանքով նշանակումը կատարում է այն կողմերի արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված նշանակողը, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը:

Եթե նշանակման ընթացակարգի վերաբերյալ համաձայնությունը չի նախատեսում նշանակումն ապահովող այլ միջոցներ, ապա կողմերից յուրաքանչյուրն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պահանջով կարող է դիմել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան այն դեպքերում, երբ կողմերի համաձայնեցրած ընթացակարգը կիրառելիս՝

1. կողմերից մեկը չի գործում դրա պահանջներին համապատասխան,
2. կողմերը կամ կողմերի նշանակած արբիտրները չեն կարողանում համաձայնության գալ սահմանված ընթացակարգի համաձայն,
3. սահմանված ընթացակարգի շրջանակներում երրորդ կողմը, ներառյալ՝ հաստատությունը, չի կատարում իրեն վերապահված որևէ գործառույթ:

Ընդ որում, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումները այս հարցերի կապակցությամբ ենթակա չեն բողոքարկման:

Այն դեպքում, երբ արբիտրը իրավաբանորեն (de jure) կամ փաստացի (de facto) ի վիճակի չէ կատարել կամ այլ պատճառներով չի կատարում իր գործառույթները առանց անհարկի ձգձգման, նրա լիազորությունները դադարում են՝ ինքնաբացարկ հայտնելով, կամ երբ կողմերը համաձայնվում են նրա լիազորությունների դադարեցման մասին: Այլ դեպքերում, երբ առկա են տարաձայնություններ այդ հիմքերից որևէ մեկի վերաբերյալ, արբիտրի լիազորությունների դադարեցման հարցը լուծելու նպատակով կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ:

Արբիտրի բացարկումը

Որպես արբիտր հնարավոր նշանակման մասին առաջարկ ստացած անձը պարտավոր է հայտնել ցանկացած այնպիսի հանգամանքների մասին, որոնք կարող են հիմնավոր կասկած առաջացնել նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ: Արբիտրը իր նշանակման պահից և արբիտրաժի ամբողջ ընթացքում՝ մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից վերջնական վճռի կայացումը կամ արբիտրաժային վարույթի որևէ այլ ձևով ավարտը, պարտավոր է կողմերին անհապաղ հայտնել ցանկացած այդպիսի հանգամանքների մասին, եթե նա ավելի վաղ չի հայտնել վերջիններիս դրանց մասին:

Արբիտրին բացարկ կարող է հայտնվել միայն այն դեպքում, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են առաջացնում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, կամ նա չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում:

Կողմը կարող է բացարկ հայտնել իր կողմից կամ իր մասնակցությամբ նշանակված արբիտրին միայն այնպիսի հիմքերով, որոնք իրեն հայտնի են դարձել նշանակումից հետո:

Եթե կողմերը համաձայնության չեն գալիս արբիտրների բացարկման վերաբերյալ, բացարկ հայտնող կողմը պարտավոր է արբիտրաժային տրիբունալի ձևավորման կամ բացարկման համար հիմք հանդիսացող որևէ հանգամանքի մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, արբիտրաժային տրիբունալ ուղարկել գրավոր բացարկ՝ բացարկի հիմքերի շարադրմամբ: Եթե արբիտրը, որին բացարկ է հայտնվել, ինքնաբացարկ չի հայտնում, կամ մյուս կողմը չի համաձայնվում բացարկին, ապա բացարկի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը:

Եթե վերջինս մերժում է բացարկի դիմումը, ապա բացարկ հայտնած կողմը բացարկի մերժման մասին որոշումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ: Քանի դեռ կողմի նման դիմումի վերաբերյալ որոշում ընդունված չէ, արբիտրաժային տրիբունալը, ներառյալ՝ այն արբիտրը, որին բացարկ է հայտնվել, կարող է շարունակել արբիտրաժային վարույթը և վճիռ կայացնել:

Իրավասության իրավասության սկզբունքը

Արբիտրաժային տրիբունալը իրավասու է որոշում կայացնելու իր իրավասության, ներառյալ՝ արբիտրաժային համաձայնության առկայության կամ վավերականության վերաբերյալ:

Արբիտրաժային տրիբունալի իրավասության բացակայության վերաբերյալ հայտարարությունը կողմը կարող է անել ոչ ուշ, քան մինչև հայցի վերաբերյալ պատասխան ներկայացնելը: Կողմի՝ արբիտր նշանակելու կամ արբիտրի նշանակմանը մասնակցելու հանգամանքը նրան չի գրկում այդպիսի հայտարարություն անելու իրավունքից:

Արբիտրաժային տրիբունալի կողմից իր իրավասությունը գերազանցելու վերաբերյալ հայտարարությունը պետք է արվի անմիջապես այն բանից հետո, երբ կողմի կարծիքով արբիտրաժի ընթացքում շոշափվում է այնպիսի հարց, որը դուրս է արբիտրաժային տրիբունալի իրավասության շրջանակից: Արբիտրաժային տրիբունալը ցանկացած դեպքում կարող է ընդունել ուշացված հայտարարությունը, եթե ուշացումը համարի հարգելի:

Նշված հայտարարության վերաբերյալ արբիտրաժային տրիբունալը կարող է կայացնել որոշում՝ կամ որպես նախնական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ, կամ անդրադառնալ դրան գործն ըստ էության լուծող որոշման մեջ: Եթե արբիտրաժային տրիբունալը իր իրավասության վերաբերյալ, որպես նախնական բնույթ ունեցող հարցի, կայացնում է որոշում, ապա կողմերից յուրաքանչյուրն այդ որոշման մասին տեղեկացում ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու հայցով, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ: Մինչև դատարանի կողմից այդ հարցի լուծումը արբիտրաժային տրիբունալը կարող է շարունակել արբիտրաժային վարույթը և վճիռ կայացնել:

ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ընթացակարգերի կանոնների որոշումը

Կողմերը կարող են իրենց հայեցողությամբ համաձայնվել արբիտրաժային տրիբունալի կողմից վարույթի իրականացման ընթացակարգի շուրջ՝ պահպանելով «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի իմպերատիվ դրույթները:

Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալը, պահպանելով «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի իմպերատիվ դրույթները, կարող է արբիտրաժային վարույթն իրականացնել այն ձևով, որը նպատակահարմար (պատշաճ, համապատասխան) կհամարի: Արբիտրաժային տրիբունալին տրված լիազորությունները ներառում են ապացույցների թույլատրելիության, վերաբերելիության, էականության և նշանակալիության որոշման լիազորությունը:

Պահպանման ենթակա հիմնական դրույթներից է կողմերի նկատմամբ հավասար մոտեցման սկզբունքը, համաձայն որի արբիտրաժում կողմերի նկատմամբ պետք է կիրառվի հավասար մոտեցում, և յուրաքանչյուր կողմին պետք է տրամադրվեն բոլոր հնարավորություններն իր գործի ներկայացման համար:

Արբիտրաժի ընթացքը

Արբիտրաժային վարույթի սկիզբը. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա տվյալ վեճի հետ կապված արբիտրաժային վարույթը համարվում է սկսված՝ վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը պատասխանողի կողմից ստանալու օրը:

Արբիտրաժի գտնվելու վայրը. Կողմերն իրենց հայեցողությամբ կարող են համաձայնության գալ արբիտրաժի վայրի վերաբերյալ: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժի վայրը որոշում է արբիտրաժային տրիբունալը՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, ներառյալ՝ կողմերի համար հարմարությունը: Արբիտրաժային տրիբունալը կարող է, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, նիստ գումարել ցանկացած այլ վայրում, որը հարմար է համարում, արբիտրների միջև խորհրդակցություն իրականացնելու, վկաներին, փորձագետներին կամ կողմերին լսելու կամ ապրանքներ, այլ գույք կամ փաստաթղթեր զննելու (ուսումնասիրելու) նպատակով:

Արբիտրաժի լեզուն. Կողմերն իրենց հայեցողությամբ կարող են պայմանավորվել արբիտրաժի վարույթի ընթացքում կիրառվող լեզվի (լեզուների) շուրջ: Նման համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալն ինքն է որոշում արբիտրաժի ժամանակ կիրառելի լեզուն (լեզուները): Այդ համաձայնությունը կամ որոշումը, եթե դրանցում այլ բան չի նշվում, վերաբերում է կողմերի ցանկացած գրավոր հայտարարություններին, գործի ցանկացած լսումներին կամ արբիտրաժային տրիբունալի ցանկացած վճռին, որոշմանը կամ հաղորդակցությանը: Արբիտրաժային տրիբունալը կարող է որոշել, որ գրավոր ապացույցը ուղեկցվի այն լեզվի կամ լեզուների թարգմանությամբ, որի մասին կողմերը պայմանավորվել են, կամ որի վերաբերյալ արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացրել:

Հայցադիմումը և դրա պատասխանը. կողմերի համաձայնեցրած կամ արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված ժամկետում հայցվորը պարտավոր է ներկայացնել իր հայցային պահանջները և դրանք հիմնավորող փաստերը, ապահովման կամ հատուցման մասին պահանջները, իսկ պատասխանողը ներկայացնում է իր առարկությունները դրանց վերաբերյալ, եթե կողմերն այդ հաղորդումների անհրաժեշտ տարրերի վերաբերյալ այլ բան չեն պայմանավորվել: Կողմերը կարող են իրենց հաղորդումներին կից ներկայացնել բոլոր այն փաստաթղթերը, որոնք, ըստ իրենց, առնչվում են գործին, կամ հղում կատարել ապագայում իրենց կողմից ներկայացվելիք փաստաթղթերին կամ այլ ապացույցներին: Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային վարույթի ընթացքում յուրաքանչյուր կողմ կարող է փոփոխել կամ լրացնել իր հայցը կամ պատասխանը, եթե արբիտրաժային տրիբունալն անպատակահարմար չհամարի այդպիսի փոփոխության թույլատրումը՝ հաշվի առնելով այն կատարելու ուշացումը:

Գործի լուծմանը և փաստաթղթային վարույթը. եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացնում գործի վարույթն իրականացնել կամ բանավոր լուծման, կամ միայն փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա: Այնուամենայնիվ, արբիտրաժային տրիբունալը պարտավոր է իրականացնել բանավոր լուծման արբիտրաժային վարույթի համապատասխան փուլում՝ կողմերից որևէ մեկի խնդրանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը պայմանավորվել են չիրականացնել բանավոր լուծման: Կողմերը պետք է նախապես պատշաճ ձևով իրազեկվեն արբիտրաժային տրիբունալի ցանկացած նիստի կամ ապրանքների, այլ գույքի զննման կամ փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով ցանկացած հանդիպման մասին: Արբիտրաժային տրիբունալին կողմերից մեկի ներկայացրած բոլոր հայտարարությունները, փաստաթղթերը կամ այլ տեղեկատվություն պետք է տրամադրվեն մյուս կողմին:

Գաղտնիությունը. եթե օրենքով կամ դատարանի որոշմամբ այլ բան նախատեսված չէ, կամ եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա բոլոր արբիտրաժային վարույթները գաղտնի են և դռնփակ, և ոչ մի փաստաթուղթ կամ ներկայացված այլ ապացույց կամ արբիտրաժի ժամանակ երբևէ կատարված հայտարարություն չի կարող տրամադրվել այլ անձանց կամ որևէ դատարանի կամ այլ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկությունները տրամադրվում են դատարանի որոշմամբ կամ անհրաժեշտ են դատարանում վարույթի շրջանակներում՝ արբիտրաժի վճռի ճանաչման, հարկադիր կատարման կամ չեղյալ հայտարարման համար: Սույն մասով նախատեսված դրույթները չեն տարածվում առանց որևէ չիրապարակման պարտավորության խախտման նախկինում հրապարակված փաստաթղթերի, ապացույցների կամ հայտարարությունների վրա:

Կողմի անպարտաճանաչությունը. եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա եթե առանց հարգելի պատճառի՝

1. հայցվորը չի ներկայացնում իր հայցադիմումը՝ արբիտրաժային տրիբունալը դադարեցնում է վարույթը.
2. պատասխանողը չի ներկայացնում իր առարկությունները հայցի նկատմամբ՝ արբիտրաժային տրիբունալը շարունակում է վարույթը՝ առարկություններ չներկայացնելը ինքնին չդիտելով որպես պատասխանողի կողմից հայցվորի պնդումների ընդունում.
3. կողմերից որևէ մեկը չի ներկայացնում նիստին կամ արբիտրաժային տրիբունալի կողմից կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում գրավոր ապացույցներ, այդ դեպքում արբիտրաժային տրիբունալը կարող է շարունակել վարույթը և արբիտրաժային վճիռ կայացնել՝ իր մոտ առկա ապացույցների հիման վրա:

Փորձագետը. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալը կարող է.

1. նշանակել մեկ կամ մի քանի փորձագետ՝ արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված հարցերի վերաբերյալ եզրակացություն տալու համար.

2. պահանջել կողմից՝ փորձագետին տրամադրել գործին վերաբերող ցանկացած տեղեկություն կամ ուսումնասիրության համար ներկայացնել գործին վերաբերող փաստաթղթեր, ապրանքներ և այլ գույք կամ այդպիսի փաստաթղթերի, ապրանքների և այլ գույքի ուսումնասիրության հնարավորություն ստեղծել:

Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա կողմերից մեկի պահանջով, կամ եթե արբիտրաժային տրիբունալը դա անհրաժեշտ համարի, փորձագետը պարտավոր է իր գրավոր կամ բանավոր եզրակացությունը ներկայացնելուց հետո մասնակցել նիստին, որտեղ արբիտրաժային տրիբունալին և կողմերին հնարավորություն կտրվի նրան հարցեր տալու, ինչպես նաև կողմերը կարող են ներկայացնել փորձագետ-վկաներ՝ քննվող հարցերի շուրջ բացատրություններ տալու նպատակով:

Դատարանի աջակցությունն ապացույցներ ձեռք բերելիս. արբիտրաժային վարույթի ցանկացած փուլում արբիտրաժային տրիբունալը կամ կողմը արբիտրաժային տրիբունալի համաձայնությամբ կարող է դիմել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան կամ իրավասու ցանկացած այլ դատարան տվյալ անձի կողմից՝ արբիտրաժի մեկ կամ մեկից ավելի կողմերին կամ արբիտրաժային տրիբունալին վարույթին առնչվող ցանկացած փաստաթղթի կամ ապացույցի տրամադրումը պարտադրելու կամ լսումներին ցանկացած անձի՝ որպես վկայի, ներկայությունն ապահովելու կամ որևէ այլ կերպ ապացույցներ ձեռք բերելուն օժանդակելու միջնորդությամբ: Դատարանը կարող է բավարարել այդ միջնորդությունն իր իրավասության շրջանակներում:

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՈ

Արբիտրաժային վճռի հասկացություն

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը չի սահմանում արբիտրաժային վճիռը: Սակայն այն կարելի է սահմանել որպես՝ արբիտրների վերջնական որոշում իրենց հանձնված գործի ամբողջության կամ մեկ մասի կապակցությամբ, լինի դա գործի էության, իրավասության կամ ընթացակարգային հարցի վերաբերյալ, ինչի աղբյուրում դադարեցվում է արբիտրաժային ընթացակարգը:

Վճռի էությամբ նկատմամբ կիրառվող իրավունքը

Արբիտրաժային տրիբունալը վեճերը լուծելիս կիրառում է կողմերի համաձայնությամբ ընտրված իրավունքի նորմերը: Յանկացած պետության իրավունքին կամ իրավական համակարգին կատարված հղումը պետք է մեկնաբանվի որպես տվյալ պետության իրավունքի նյութական, այլ ոչ թե կոլիզիոն նորմերին կատարված հղում:

Կողմերի համաձայնության բացակայության դեպքում արբիտրաժային տրիբունալը կիրառում է այն իրավունքը, որը որոշված է իր կողմից կիրառելի համարվող կոլիզիոն նորմերով:

Անկախ ընտրված իրավունքից՝ կողմերը մինչև վճռի կայացումը կարող են արբիտրաժային տրիբունալին ուղղակիորեն լիազորել վեճը լուծելու արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա (*ex aequo et bono*) կամ որպես հաշտարար միջնորդ (*amiable compositeur*):

Բոլոր դեպքերում արբիտրաժային տրիբունալը վճիռ է կայացնում պայմանագրի պայմանների համաձայն՝ հաշվի առնելով տվյալ գործարքի համար կիրառելի առևտրային սովորույթները:

Արբիտրաժային վճռի կայացումը

Մեկից ավելի արբիտրների մասնակցությամբ վճռի քննության դեպքում արբիտրաժային տրիբունալը վճիռ է կայացնում իր անդամների ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ: Այնուամենայնիվ, նախագահողը կարող է որոշում կայացնել վարույթին առնչվող հարցերի շուրջ, եթե դրա համար լիազորված է կողմերի կամ արբիտրաժային տրիբունալի բոլոր անդամների կողմից:

Արբիտրաժային տրիբունալի վճիռը պետք է կայացվի գրավոր ձևով և ստորագրվի միանձնյա արբիտրի կամ արբիտրների կողմից: Մեկից ավելի արբիտրների մասնակցությամբ արբիտրաժային վարույթի դեպքում բավական է արբիտրաժային տրիբունալի անդամների մեծամասնության ստորագրությունների առկայությունը այն պայմանով, որ վճռում նշվեն բացակայող ստորագրությունների պատճառները:

Արբիտրաժային տրիբունալի վճռում պետք է նշվեն դրա հիմքում ընկած հիմքերը¹, բացառությամբ, երբ կողմերը համաձայնվել են, որ այդպիսիք չպետք է նշվեն վճռում, կամ եթե կայացվել է համաձայնեցված պայմանների շուրջ վճիռ: Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալի վճռում պետք է նշվեն նաև արբիտրաժային ծախսերը և դրանց բաշխումը կողմերի միջև:

Վճռի կայացմամբ ավարտվում է արբիտրաժը: Արբիտրաժը ավարտվում է նաև հետևյալ դեպքերում կայացվող որոշումներից մեկի առկայության ժամանակ.

1. հայցվորը հրաժարվում է հայցից, բացառությամբ, երբ պատասխանողն առարկում է գործի վարույթի ավարտման դեմ, և արբիտրաժային տրիբունալը ճանաչում է նրա օրինական շահը վճռի վերջնական կարգավորման հարցում.
2. կողմերը պայմանավորվում են վարույթի դադարեցման վերաբերյալ.
3. արբիտրաժային տրիբունալը գտնում է, որ գործի քննության շարունակումը որոշակի պատճառներով դարձել է ավելորդ կամ անհնարին:

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԿԱՄ ԴՐԱ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ

Արգելվում է վերանայել արբիտրաժային վճիռը: Վճիռը կարող է չեղյալ ճանաչվել կամ դրա կատարումը և մերժումը կարող են մերժվել, միայն եթե առկա են օրենքով նախատեսված հիմքեր, և եթե համապատասխան դիմումը ներկայացվել է վճռի ստացումից երեք ամսվա ընթացքում:

Վճիռը չեղյալ ճանաչվել կամ դրա կատարումը և ճանաչումը մերժելու հիմքերը սահմանափակ են: Դրանք բաժանվում են երկու խմբի:

Առաջինների դեպքում դիմում ներկայացնող անձն ինքը պետք է ապացուցի, որ օրենքով նախատեսված հիմքերն առկա են: Այս խմբում ընդգրկված են հետևյալ հիմքերը.

1. արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, անվավեր է,
2. դիմում ներկայացնող կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից,
3. վճիռ է կայացվել այնպիսի վճռի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային տրիբունալի վճռի միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր,

4. արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, եթե այդ համաձայնությունը չի հակասում «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի պարտադիր դրույթներին, կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել նշված օրենքին,

5. վճիռների ճանաչման և կատարման դեպքում՝ վճիռը դեռևս չի դարձել պարտադիր կողմերի համար կամ չեղյալ է ճանաչվել, կամ դրա կատարումը կասեցվել է այն պետության դատարանի կողմից, որտեղ կամ որի իրավունքին համապատասխան՝ կայացվել է այդ վճիռը:

Հիմքերի երկրորդ խմբի դեպքում դատարանն ինքնուրույն է որոշում վճիռը չեղյալ ճանաչելու կամ վճռի կատարումը և ճանաչումը մերժելու հիմքերի առկայությունը: Այդ հիմքերն են.

1. համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի կողմից,
2. վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին:

ՕՐԵՆՔԻ ԲԱՅԵՐԸ

«Առևտրային արբիտրաժի մասին» օրենքը չի կարգավորում մի շարք հարցեր, մասնավորապես.

1. Հանրային իրավունքի սուբյեկտների մասնակցության հարցերը, այդ թվում՝ պետության իմունիտետը,
2. Տարբեր արբիտրաժային դատարանների առջև առկա գործերի միացումը,
3. Հաշվանցման պահանջների հարցը,
4. Ոչ լրիվ արբիտրաժային տրիբունալների կայացրած վճիռների ճակատագիրը,
5. Արբիտրների պատասխանատվությունը,
6. Արբիտրաժային ընթացակարգի ծախսերը:

Այս աշխատությունը չի անդրադառնում բոլոր էական հարցերին, և ոչ էլ վերլուծված հարցերի բոլոր կողմերը: Այս աշխատությունը ընդամենը ընդհանուր ուղեցույց է: Այն չպետք է օգտագործվի որպես իրավական խորհրդատվության փոխարինում:

Եթե Գուք կարիք ունեք լրացուցիչ տեղեկատվության, խնդրում ենք կապվել:

GPARTNERS
Tel: +374 10 65 01 92
E-mail: info@gpartners.am
www.gpartners.am

GPartners ընկերությունը փակ բաժնետիրական ընկերություն է, որը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Գործունեության հիմնական վայրն է՝ Ամառանոցային փ. 2/5, Երևան, 0002, Հայաստանի Հանրապետություն:

«Partner» բառն օգտագործվում է GPartners-ի համապատասխան որոկավորմամբ անդամ, աշխատակից կամ խորհրդատու վկայակոչելու համար: GPartners-ի ընկերներ համարվող ադամների և ոչ անդամների, ինչպես նաև նրանց մասնագիտական որակավորումների ցանկը կարող է տրամադրվել վերոնշյալ հասցեում: